ՍԱՄՍՈՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ
ՈՍԱՍԼՔ ՀԻՇԱՏԱԿԻ


ՍԱՄՍՈՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ
ՈՍԱՍԼՔ ՀԻՇԱՏԱԿԻ

ԱՐԻՍ
ԳՐԻԳՈՐՅԱՆ

ԱՐԻՍ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՊՈՊԱՏՅԱ ՀԻՇԱՏԱԿԻՆ

(ակնարկ)

Ստեփանակերտ
2000

ԳՄԴ 84 Հ 7-5
Գ 313

Բոլոր այն զեղեցկատրեմ տղաներին,
ովքեր գնացին
ու այլևս չվերադարձան...

ԳՐԻԳՈՐՅԱՆ Ա.Ա.

Գ 313. «Ղողանջ հիշատակի»: Ակնարկ (Արիս Գրիգորյան), Ստեփանակերտ, «Վերնիսաժ» ՍՊԸ, 2000, 12 էջ, տպ.՝ 300:

Գրքույկում պատմվում է Արցախյան պատերազմի նահատակ Հայկ Ալեքսանյանի կյանքի ու հերոսական ոգորումների մասին: Այն հեղինակի հինգերորդ հանդիպումն է ընթերցող շրջանակների հետ:

Հայկ Պապիկի Ալեքսանյան.

Ծնվել է 1973-ի դեկտեմբերի 9-ին, Հադրութի շրջանի Խանձաձոր գյուղում:

Սովորում էր Երևանի անասնաբուժական-անասնաբուծական ինստիտուտում, բայց ԽՍՀՄ ՆԳՆ ներքին զորքերի՝ Արցախում տեղակայված ստորաբաժանումների թողտվությամբ ազերի օմօնականների կողմից կատարվող խժդժությունները չէին կարող հանգիստ թողնել նրան ու վերջնականապես որոշեց վերադառնալ Արցախ:

1991-ի մայիսից նա անդամագրվել է գյուղի ֆիդայական ջոկատին, որը հետագայում վերակազմավորվել է վաշտի և ընդգրկվել Սարինշենի գումարտակի («Գետակի») կազմում: Հայկն իր դասակով մասնակցել է պաշտպանական ու ազատագրական բազմաթիվ մարտերի: Զոհվել է 1993-ի դեկտեմբերի 22-ին, Ֆիզուլու շրջանի Բոյուկ-Բահմանլու գյուղի համար ծավալված կատաղի մարտում:

Երևի երբեք չես պատկերացրել, Հայկ, որ ապրելու ես ընդամենը 20 տարի 13 օր: Ինչպե՞ս պատկերացնեիր, դու դեռ ապրում էիր քո պատանեկության բոլորովին խաղաղ օրերի անդորրը, անհոգությունը:

Գյուղի ութամյակը, հետո՝ շրջկենտրոնի միջնակարգը, հետո՝ բարձրագույնում հաջողությամբ հանձնած քննություններդ՝ դրան վառ ապացույց: Միջնակարգի արծաթե մեդալդ, Երևանի անասնաբուժական-անասնաբուծական ինստիտուտի առաջին կուրսի հաջող պարապմունքները հուսադրող էին, բայց արդեն անհանգստությունը պաշարել էր քեզ, Արցախ-աշխարհը: 1988-ի խաղաղ ցույցերը, թվում էր, խաղաղ ու ցանկալի ելք կունենային, բայց... Երիցս իրավացի էին մեր պապերը, քո Հայկ պապը, անբարիշտ «հարևանի» նկատմամբ իրենց չմահավատությամբ: Այս անգամ էլ՝ նույնը: Եվ ընկան Գետաշենն ու Մարտունաշենը, ԽՍՀՄ ՆԳՆ ներքին զորքերի ստորաբաժանումների հետ մեր գյուղերը լցվեցին օմօնականներով, «անձնագրային

ռեժիմի ստուգման» պատրվակի տակ նրանք խուզարկում էին ամենուր՝ զենք ու զինամթերք հայտնաբերելու նպատակով, ձերբակալում երիտասարդներին: Իսկ 1991-ի մայիսի 13-ի ու 15-ի դեպքերը ցնցեցին մեր հոգիները՝ Գետաշենի ենթաշրջանի անկումից հետո դատարկվեցին Հադրութի 14 գյուղերը՝ Բանաձորը, Առաքելը, Ծամձորը, Ցորը, Արևշատը... նաև՝ Խանձաձորը: Իսկ դու՝ Երևանում: Եվ՝ հանգի՞ստ: Երկրորդ կուրսում էիր արդեն, բայց լուրն առնելուց հետո աչքերիդ սևն ու սպիտակն արդեն չէր ջոկվում: Ինչպե՞ ~ս...

Որոշումը պատրաստ էր, միանգամից, մեկ ակնթարթում. քո տեղը գյուղում է, քո հասակակիցների, ընկեր-եղբայր տղաների հետ՝ Հովիկի, Մայիսիկի, Էռնեստի, մյուսների... Եկար: Քիչ է՝ ասել անդամագրվեցիր ինքնապաշտպանական ջոկատին, դու պատրաստի զինվոր էիր, իսկ եղբայրդ իզուր էր ջանում քեզ համոզել, հորդորել, որ քո «փեշակին» վերադառնաս, բայց, երբ ի ցույց դրեցիր պրկված մկաններդ՝ Հովիկը տեղի տվեց: Երևի մտքում՝ «եղբայրս տղամարդ է արդեն» ասաց ու տեղի տվեց: Իսկ գուցե և չասաց ոչինչ,







բայց, այնուամենայնիվ, մտքի մեջ ընկավ: Դու էլ՝ քո «նոր փեշակին» անցար ու շուտ էլ նկատելի դարձան կարողություններդ: Ամենադժվար առաջադրանքներն անգամ վստահորեն էիր կատարում ու ամենայն ճշտությամբ:

Հետո քո հանդեպ տածած վստահությունը վճիռ դարձավ. քեզ դասակ վստահվեց: Բայց դու հրամանատար լինելը չէիր կարող պաշտոն համարել: Դու՝ պաշտոնյա՞: Ծիծաղելի է: Դու զինվոր ես, վրիժառու զինվոր և պետք է միշտ դասակի առջևում լինես: Եվ՝ եղար: Միշտ՝ առաջին գծում, դասակի առաջամասում: Եվ տղաներն էլ քաջալերվում էին: Ո՞վ չէր ցանկանա նման հրամանատարի հետ մարտի նետվել, կենաց ու մահվան մարտի:

Ու ձգվեց քո մարտական ուղին Սարինշենից մինչև... Բոյուկ-Բահմանլու՝ Քելբաջարով, Ձաբրայիլ-Մահմուդլու-Սուլթանլու-Ղուբաթլու-Ձանգելան-Հորադիզ-Ակարա-Մինջևանով:

Քսան տարեկանդ մարտական դիրքում լրացավ, թշնամու կրակի տակ: Տղաները նշեցին տարեդարձդ, զինվորավարի, երգ ու

ծիծաղով, կատակներով: Հայրդ էլ էր եկել, տեսաք իրար, անսքող ուրախությամբ համակվեցիք: Մեկ շաբաթ մնաց մոտներդ, մի գիշեր էլ հետներդ պահակություն անելուց հետո վերադարձավ տուն, որ վերջ տա Անիկ մայրիկիդ անհանգստությանը, մտատանջությանը, ցրի վատ կասկածները:

Իսկ դիրքերում շարունակում են իրար հաջորդել դեկտեմբերի 11-ի առավոտյան սկսված եռօրյա կատաղի մարտը, 14-ի և 15-ի նոր հարձակումները, որոնք միշտ էլ հանդիպելով հայ քաջարի պաշտպանների անմռունչ ու աներեր դիմադրությանը՝ ետ են շպրտվում: Կրկին նոր հարձակումներ են ձեռնարկվում, համարյա ամեն օր, հակառակորդն ամեն կերպ ջանում էր ճեղքել պաշտպանական գիծը և կրկին՝ ապարդյուն:

Դեկտեմբերի 21-ին կատաղի մարտ է սկսվում Բոյուկ-Բահմանլուի ուղղությամբ: Հովիկն ուզում է համոզել քեզ, որ մնաս, չմասնակցես մարտին: Դեռ ընտանիք չունի՝ կին, երեխա, ոչինչ չի տեսել՝ մտածում է: Դու էլ՝ քո հերթին՝ Հովիկին, որ խնայի իրեն, պահպանի կնոջ ու երեխաների համար: Ես՝ ի՞նչ, մտածում ես, ես կին ու երեխաներ

չունեմ: Տեսածդ վատ երազն էլ անընդհատ պտտվում էր ուղեղիդ մեջ, հանգիստ չէր տալիս քեզ, իսկ դու եղբորդ անգամ չպատմեցիր, միայն ասացիր. «Վատ երազ եմ տեսել»: Ու՝ վերջ:

Ու երկուսդ էլ նետվեցիք մարտի՝ Հովիկն իր ունեցած ընտանիքի, իսկ դու՝ քո չունեցածի, ավելի ճիշտ՝ քո ունենալիքի, Հադրութի ու Արցախի բոլոր ընտանիքների խաղաղության համար: Բայց դաժան են պատերազմի օրենքները: Անասելի դաժան...

...Հրետանային մեկօրյա նախապատրաստությունից հետո մեծաքանակ հետևակով, տանկերի ու հետևակի մարտական մեքենաների աջակցությամբ, հակառակորդը դեկտեմբերի 22-ի առավոտյան Ֆիզուլի-Բեյլոկան գծում նոր լայնածավալ հարձակում է ձեռնարկում: Դու, ինչպես միշտ, քո տղաների հետ առաջին գծում ես: Երկրորդ գծից պարզ երևում էր, թե ինչպես եք կռվում, անձնվիրաբար, ինքնամոռաց: Եվ հանկարծ՝ ռադիոկապով օգնություն ես խնդրում: Հովիկն այլևս չէր կարող համբերել երկրորդ գծում: Նա իր վեց զինվորների հետ կարողանում է ապահովել դասակիդ երկրորդ գիծ ետքաշվե-

լը, բայց այդ տեղանքն էլ հակառակորդի անընդհատ կրակի տակ էր: Ավելի սաստկացող մարտի պայմաններում օգնության կարիքն էլի զգացվում էր և քո ռադիոկապը կրկին օգնության աղերսանք էր պարունակում. «Ախպեր, արի օգնության...»

Հովիկի տեղը տեղ չէր տալիս, չէ՞ որ աչքի սևն ու սպիտակը դու էիր:

Բաղասյան Վահանը, գումիրամանատարը, 15 հոգով առաջ անցավ, շարքը Հովիկն էր եզրափակում, սակայն կրկին սկսեց աշխատել հակառակորդի հրետանին և Վահանը միայն հինգ հոգով կարողացավ հասնել քեզ, մնացածի անցումը ձախողվեց: Հրետանու աշխատանքն ավելի ուժգնացավ, ամենուր՝ արկերի պայթյուն, դղիրդ ու որոտ: Բաց տարածքում, ինչպես ափի մեջ, երևում էր ամեն ինչ: Հովիկն անթարթ հայացքով հետևում էր մարտադաշտում ծավալվող գործողություններին, ինքը՝ անմասն, բայց ոչ անհաղորդ: Իսկ քո ռադիոկապն այլևս օգնություն չէր աղերսում, թեև 10 հոգով արևշատցի Հայրապետյան Ավետիքն էլ հասավ, քո ձայնը չէր լսվում: Ավետիքի հետ

Գրական-գեղարվեստական
հրատարակություն

ԱՐԻՍ ԱՐՍԵՆԻ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՊՈՂԱՆՁ ՀԻՇԱՏԱԿԻՆ

(ակնարկ)

Սրբագրիչ՝ Ռուզան Գասպարյան
Լուսանկարիչ՝ Աշոտ Երամիշյան

Ստեփանակերտ, 2000 թ., 12 էջ, տպ.՝ 300:
«Վերնիսաժ» ՍՊԸ

ԸՆԴՈՒՆԵԼ ՈՐՊԵՍ ՆՎԵՐ

Հեղինակն իր հատուկ շնորհակալությունն է հայտնում *Արամ Արեխցյանին*՝ գրքույկի հրատարակման գործին օժանդակելու համար